



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 փետրվարի 2004թ.

N 38

ք.Ստեփանակերտ

Ընդերքօգտագործման խորհրդատվական հանձնաժողովի գործունեության կարգը հաստատելու մասին

Համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Տախագահի 2003թ. նոյեմբերի 18-ի „Ընդերքօգտագործման խորհրդատվական հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին,, ՆՀ-63 հրամանագրի և „Ընդերքն ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրելու /կոնցեսիայի/ մասին,, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի պահանջների` Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

Հաստատել ընդերքօգտագործման խորհրդատվական հանձնաժողովի գործունեության կարգը /կցվում է/:

ԼՂՀ վարչապետ

Ա. ՂԱՆԻԻԵԼՅԱՆ

Կ Ա Ր Գ

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը մշակված է „Ընդերքն ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրելու /կոնցեսիայի/ մասին,, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի /այսուհետ՝ օրենք/ պահանջներին համապատասխան:

2. Ուսումնասիրության հատուկ լիցենզիա կամ հանքարդյունահանման հատուկ լիցենզիա /այսուհետ՝ Լիցենզիա/ հայցելու նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լիազորված մարմիններ /այսուհետ՝ Լիազորված մարմին/ ներկայացված դիմումների գրանցման օրվանից 15 օրվա ընթացքում Լիազորված մարմինն ընդերքօգտագործման խորհրդատվական հանձնաժողովին /այսուհետ՝ Հանձնաժողով/ է ներկայացնում իր կողմից դրական կարծիքի արժանացած Լիցենզիաների տրամադրման /բացառությամբ մրցույթով տրամադրվող Լիցենզիաների/ վերաբերյալ եզրակացությունը և օրենքով սահմանված փաստաթղթերը:

Փաստաթղթերը լրիվ և լիարժեք չլինելու դեպքում Հանձնաժողովի կողմից դրանք եռօրյա ժամկետում վերադարձվում են Լիազորված մարմնին՝ այն լրամշակելու և կրկին ներկայացնելու համար:

3. Հանձնաժողովն իրականացնում է անկախ փորձագիտական գործընթաց հայցվող Լիցենզիաների տրամադրման վերաբերյալ:

2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆԸ

ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ

4. Լիցենզիաների տրամադրման վերաբերյալ անկախ փորձագիտական եզրակացության ապահովման նպատակով Հանձնաժողովը իրականացնում է ներկայացված ծրագրային խնդիրների և միջոցառումների հիմնավորվածության և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության աստիճանի գնահատում, ելնելով ընդերքի արդյունավետ ու համալիր օգտագործման, շրջակա միջավայրի պահպանության ապահովման և լեռնահանքային արդյունաբերության զարգացման ռազմավարության խնդիրներից:

5. Հանձնաժողովը փորձագիտական եզրակացությունը մշակելիս վերլուծում է նաև ընդերքն ուսումնասիրության և /կամ/ հանքարդյունահանման ծրագրերով նախատեսված՝ երկրաբանական աշխատանքների կատարման մեթոդների, օգտակար հանածոների

արդյունահանման եղանակների, աշխատանքների կատարման ժամկետների, կատարվելիք ֆինանսական ծախսերի և շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների իրականացման հիմնավորվածությունը:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

6. Հանձնաժողովն, օրենքով սահմանված փաստաթղթերը ստանալու պահից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում, Լիազորված մարմնին տրամադրում է փորձագիտական եզրակացություն:

7. Հանձնաժողովի փորձագիտական եզրակացությունը ընդունվում է Հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ:

Փորձագիտական եզրակացությանը կցվում են Հանձնաժողովի այն անդամների հատուկ կարծիքները, որոնք համաձայն չեն ընդունված դրական եզրակացության հետ:

8. Հանձնաժողովի եզրակացությունը ներառում է՝

- ծրագրային խնդիրների և միջոցառումների հիմնավորվածության աստիճանի, այդ թվում՝ ֆինանսական ապահովվածության գնահատական,

- ծրագրերի իրատեսության և տնտեսական հիմնավորվածության գնահատական,

- այլ տեղեկություններ և վերլուծություններ, որոնք Հանձնաժողովն անհրաժեշտ կհամարի՝ լիարժեք փորձագիտական եզրակացություն ներկայացնելու համար,

- Լիցենզիաների տրամադրման կամ մերժման մասին փորձագիտական եզրակացություն:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Հանձնաժողովն իր նպատակների իրականացման համար իրավասու է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից, պաշտոնատար անձերից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, վերլուծական նյութեր, վիճակագրական տվյալներ և այլ փաստաթղթեր:

10. Փորձագիտական եզրակացության լիարժեքությունն ապահովելու նպատակով՝ Հանձնաժողովն կարող է իր աշխատանքներին ներգրավել համապատասխան որակավորման մասնագետներ: